ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

29 ապրիլի 2019թ. թիվ 245-Ա

«ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՃՈՃԿԱՆԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ
ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին ենթակետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2010թ. մարտի 18-ի թիվ 113-Ն հրամանով հաստատված «Հայաստանի Հանրապետության «Պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի ձևավորման» կարգի 4, 7, 9, 11, 15 և 17 կետերը, հաշվի առնելով «ՀՀ Լոռու մարզի Ճոճկանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի 22.04.2019թ. թիվ Գ-5 և Գ-6 գրությունները, Ախթալա համայնքի ղեկավարի 21.03.2019թ. թիվ 143/22-19 գրությունը՝

Ո ր ո շ ու մ եմ.

ՀՀ Լոռու մարզպետի 2016թ. մարտի 15-ի «Լոռու մարզի դպրոցների խորհուրդների կազմերը հաստատելու մասին» թիվ 75-Ա որոշման հավելվածի «ՀՀ Լոռու մարզի Ճոճկանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ մասում՝

1. «Չերչինյան Անուշ» բառերը փոխարինել «Խուդինյան Հեղինե» բառերով, «Մելիքսեթյան Կարինե» բառերը՝ «Դուրգարյան Օլեգ» բառերով և «Ղորխմազյան Վաղարշակ» բառերը՝ «Միկոյան Արթուր» բառերով:

2. Վերահաստատել մանկավարժական խորհրդի կողմից առաջադրված Անահիտ Բաղալյանի, ծնողական խորհրդի կողմից առաջադրված Սերինե Անդրեասյանի և համայնքի ղեկավարի կողմից առաջադրված Արկադի Թամազյանի թեկնածությունները:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Invalid signature

X

ԱՆԴՐԵՅ ՂՈՒԿԱՍՅԱՆ

Ա.ՂՈՒԿԱՍՅԱՆ

2019թ. ապրիլի 29
ք.Վանաձոր